



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՄԴԱՐՅԱ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**


AEPLAC-ի սեմինար
«ԵՄ Տարածաշրջանային քաղաքականությունը և տարածքային
զարգացման գործիքները»
Վանաձոր, փետրվարի 19, 2010թ.


ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 


<p><i>Կառլ V Հռոմեական սրբազան կայսրության կայսր 1500-1558թթ.</i></p>	<p>Դեռևս 16-րդ դարում Հռոմեական սրբազան կայսրության կայսր Կառլ V-ը երազում էր Եվրոպայի միասնականության մասին՝ համոզված լինելով, որ միայն համատեղ ուժերով է հնարավոր ապահովել նրա անվտանգությունն ու խաղաղությունը: Նրա երազանքը իրականություն դարձավ ավելի քան 4 դար անց:</p>
---	--


 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p style="text-align: center;"><i>Ուինստոն Չերչիլ Միացյալ Թագավորության վարչապետ 1940-45, 1951-55թթ.</i></p>	<p>«Եվրոպայում են ծնվել մեր դարի ամենահուժկու ազգայնական շարժումները, որոնք մենք վերապրել ենք նույնիսկ մեր ժամանակներում և որոնք վտանգել են համայն մարդկության խաղաղությունն ու հեռանկարները... Այնուամենայնիվ, կա մի դեղատոմս, որը ազգերի մեծամասնության համընդհանուր հավանությանն արժանանալու դեպքում կարող է հրաշքի պես փոխել ամեն ինչ և մի քանի տարում ամբողջ Եվրոպան կամ դրա մեծ մասը դարձնել այնքան ազատ և երջանիկ, ինչպիսին այսօր Շվեյցարիան է... Եվ ո՞րն է այդ դեղատոմսը. Դա Եվրոպական ընտանիքի վերաստեղծումն է այնպիսի եղանակով, որը կերաշխավորի խաղաղությունը, անվտանգությունը և ազատությունը. Մենք պետք է կառուցենք Եվրոպայի միացյալ նահանգների պես մի բան»:</p> <p>Վինստոն Չերչիլ Ցյուրիխի համալսարանում արտասանած ճառից (1946)</p>

 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p style="text-align: center;"><i>Առաջին եվրոպական պողպատի Չուլակտորը Ժան Մոնեի և այլ ղեկավարների ձեռքին</i></p>	<p>1951:</p> <p style="text-align: center;">Եվրոպայի քարածխի և պողպատի համայնք</p> <ul style="list-style-type: none"> • Հիմնադրվելով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ այն նպատակ ուներ ապահովելու խաղաղությունը Եվրոպայի հաղթած և պարտված երկրների միջև՝ ստեղծելով ընդհանուր կառույցներ, որոնք կապահովեին նրանց համագործակցությունը որպես հավասար գործընկերներ; • Հիմնված էր Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբերտ Շումանի ծրագրի վրա; • Վեց հիմնադիր երկրները՝ Բելգիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Ֆրանսիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը և Նոլանդիան, համաձայնագիր ստորագրեցին ծանր արդյունաբերությունը (քարածուխ և պողպատ) ընդհանուր կառավարելու վերաբերյալ:


ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p><i>Հռոմի սլայմանագրի ստորագրումը</i></p>	<p>1957:</p> <p>Հռոմի համաձայնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Վեց հիմնադիր երկրները՝ ընդլայնեցին համագործակցությունը տնտեսական այլ ոլորտների վրա՝ ստեղծելով Եվրոպական տնտեսական համայնքը (ԵՏՀ) կամ «ընդհանուր շուկան»; • Դրա արդյունքում՝ մարդիկ, ապրանքները, ծառայությունները և կապիտալն այսօր ազատ տեղաշարժվում են միության տարածքում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>1951</p> <p>Հիմնադիր անդամներ</p> <p>Բելգիա Ֆրանսիա Գերմանիա Իտալիա Լյուքսեմբուրգ Հոլանդիա</p>	


ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>1973</p> <p><i>Առաջին ընդլայնում</i></p> <p>Դանիա Իռլանդիա Միացյալ Թագավորություն</p>	



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>1981</p> <p><i>Հերթական ընդլայնում</i></p> <p>Հունաստան</p>	



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>1986</p> <p><i>Հերթական ընդլայնում</i></p> <p>Պորտուգալիա Իսպանիա</p>	

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>1995</p> <p><i>Հերթական ընդլայնում</i></p> <p>Ավստրիա Ֆինլանդիա Շվեդիա</p>	

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>2004</p> <p><i>Ամենախոշոր ընդլայնումը</i></p> <p>Կիպրոս Չեխիայի Հանրապետություն Սլովակիա Էստոնիա Հունգարիա Լատվիա Լիտվա Մալթա Լեհաստան Սլովենիա</p>	

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>2007</p> <p><i>Վերջին ընդլայնումը</i></p> <p>Բուլղարիա Ռումինիա</p>	

 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>Թեկնածու երկրներ</p> <p>Խորվաթիա Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Թուրքիա</p> <p>Պոտենցիալ թեկնածու երկրներ</p> <p>Ալբանիա Բոսնիա և Հերցեգովինա Մոնտենեգրո Սերբիա Կոսովո Իսլանդիա</p>	

 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p>ԵՄ դրոշմ</p>	<p>ԵՄ կայացումը</p> <ul style="list-style-type: none"> ▪ 1948: Բենիլյուքս մաքսային միություն ▪ 1951: Աձխի և պողպատի եվրոպական համայնք ▪ 1957: Եվրոպական տնտեսական համայնք ▪ 1967: Եվրոպական համայնք ▪ 1991: Եվրոպական միության համաձայնագիր (Մասստրիխտի համաձայնագիր) ▪ 1997: Ամստերդամի համաձայնագիր ▪ 2001: Նիցցայի համաձայնագիր ▪ 2002: Ընդհանուր արժույթ ▪ 2009 Լիսաբոնյան համաձայնագիր

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

*«Ընդլայնումը
Եվրամիության և
Եվրոպայի հաջողված
իրադարձությունն է: Այն
օգնել է Երոպային
հաղթահարելու
մասնատումը և նպաստել
է աշխարհամասի
խաղաղությանն ու
կայունությանը»:*

**Եվրոպական խորհրդի
հռչակագիր**
15 դեկտեմբերի
2006թ.

ԵՄ ինտեգրում

Ընդլայնումը

- Առաջ բերեց բարեփոխումներ և ժողովուրդներին համախմբեց ընդհանուր սկզբունքների շուրջ, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը, հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, օրենքի գերակայությունը և շուկայական տնտեսությունը:
- Մեծացրեց ԵՄ կշիռն աշխարհում և դարձրեց այն առավել ուժեղ ու գրավիչ միջազգային գործընկեր:


	1957	2007
Անդամ պետություններ	6	27
Բնակչություն	174 միլիոն	493 միլիոն
Լեզուներ	4	23

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**Եվրոպական միություն
Միավորում բազմազանության
հիման վրա**

Եվրոպական միություն.
փոփոխությունների և առաջընթացի ավելի քան կեսդարյա պատմություն

- ԵՄ հիմնադրումից ի վեր Եվրոպան վայելում է ամենաերկար խաղաղությունը իր պատմության ընթացքում;
- Եվրոպական քաղաքական ինտեգրումը աննախադեպ է պատմության մեջ;
- ԵՄ ընդլանումը օգնեց հաղթահարելու Եվրոպայի բաժանումը՝ նպաստելով այս աշխարհամասում խաղաղության հաստատմանը, զարգացմանն ու կայունությանը;
- Միասնական շուկա և ընդհանուր տարադրամ;
- Եվրամիությունը միավորում է Եվրոպայի քաղաքացիներին՝ պահպանելով նրանց բազմազանությունը:



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՄ կառույցները


Եվրոպական խորհուրդ


«Եվրոպական խորհուրդը պետք է խթանի միության զարգացումն ու սահմանի ընդհանուր քաղաքական ուղեկիշերը»:


ԵՄ համաձայնագրի 4-րդ հոդված

- Եվրոպական խորհրդում ներկայացված են անդամ պետությունների կամ կառավարությունների ղեկավարները
- Հանդիպում են եռամսյակային պարբերականությամբ
- Լիսաբոնյան ռազմավարության համաձայն, մարտյան հանդիպման ընթացքում կքննարկվեն տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի վերաբերյալ խնդիրներ

*Եվրոպական խորհրդի նախագահ
Շերման Վան Ռոմպոյ*

 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	
<p><i>Եվրոպական խորհրդի գրասենյակը Բրյուսելում</i></p>	<h3>ԵՄ կառույցները</h3>
	<p>Եվրոպական խորհրդի գործառույթները</p> <ul style="list-style-type: none"> • Կարգավորում է խնդիրներ, որոնք վեր են ստորին օղակների իրավասություններից • Պաշտոնապես վավերացնում է կարևոր փաստաթղթերը • Ներգրավվում է Լիսաբոնյան համաձայնագրի փոփոխությունների գործընթացին • Ղեկավարում է արտաքին հարաբերությունները՝ որպես պետությունների ղեկավարների կոլեկտիվ մարմին

 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	
<p><i>Եվրոպական հանձնաժողովի նախագահ խոսե Մանուել Բարոզո</i></p>	<h3>ԵՄ կառույցները</h3>
	<p>Եվրոպական հանձնաժողով</p> <ul style="list-style-type: none"> • ԵՄ գործադիր ճյուղն է, որը ներկայացնում և խրախուսում է համաեվրոպական շահերը; • 27 հանձնակատարներ, որոնք պատասխանատու են տարբեր ոլորտների համար; • Ներկայացնում է օրենսդրական նախաձեռնություններ; • Իրականացնում է ԵՄ ամենօրյա կառավարումը; • Կիրարկում է եվրոպական օրենքը Արդարադատության դատարանի հետ միասին; • Բանակցություններ է վարում առևտրային հարցերում և կառավարում Եվրոպայի բազմակողմ զարգացմանն ուղղված համագործակցությունը;



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՄ կառույցները

Եվրոպական միության խորհուրդ

- ԵՄ հիմնական որոշում ընդունող կառույցն է, որը բաղկացած է 27 անդամ պետությունների նախարարներից և ներկայացնում է անդամ պետությունների շահերը;
- Որոշումներ է կայացնում արտաքին քաղաքականության հարցերի շուրջ;
- Համակարգում է անդամ երկրների տնտեսական և սոցիալական քաղաքականությունները;
- Հաստատում է ԵՄ բյուջեն խորհրդարանի հետ համատեղ;
- Կներում է միջազգային համաձայնագրեր ԵՄ անունից;
- Զարգացնում է ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը;
- Խորհրդի նախագահությունը ստանձնում են անդամ-պետությունները 6 ամիս պարբերականությամբ:

*ԵՄ խորհրդի կենտրոնականը
Բրյուսելում*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՄ կառույցները

Եվրոպական խորհրդարան

- Ներկայացնում է անդամ պետությունների քաղաքացիների ձայնը. Պատգամավորներն ընտրվում են ուղղակիորեն 5 տարի ժամկետով;
- Խորհրդի հետ համատեղ ընդունում է ԵՄ օրենքները և հաստատում է ԵՄ բյուջեն;
- Հաստատում է ԵՄ հանձնակատարներին;
- Վերահսկողություն է իրականացնում ԵՄ այլ մարմինների նկատմամբ:


Եվրոպական խորհրդարան


ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ


Եվրոպական խորհրդարանի կազմը


Ուղղակի ընտրություններ ԵՄ բոլոր անդամ երկրներում 5 տարին մեկ անգամ


							Total
	5	5	5	4	1		22
	6	4	5			2	17
	2	7			9		22
	1	4	3	2	1	2	13
	42	23	12	14	8		99
	1	1	3	1			6
	4	3	4		1		12
	8	8		1	3	2	22
	23	21	2	2	1	1	50
	29	14	6	14	5	1	72
	35	21	7		9		72
	2	2			2		6
	3	1	1	1	1	1	8
	4	3	2		1	2	12
	3	1	1	1			6
	14	4		1		3	22
	2	3					5
	5	3	6	3	1	2	25
	6	4		2			17
	28	7			15		50
	10	7			5		22
	14	11	5			3	33
	3	2	2				7
	6	5	1			1	13
	4	2	4	2		1	13
	5	5	4	3		1	18
		13	11	5	25	1	72
					13	4	22
							27
							736
Total							Total
	265	184	84	55	54	35	736

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p><i>Արդարադատության Եվրոպական դատարանի խորհրդանիշը</i></p>	<p style="text-align: center;">ԵՄ կառույցները</p> <p>Արդարադատության եվրոպական դատարան</p> <ul style="list-style-type: none"> • ԵՄ արդարադատության բարձրագույն մարմինն է; • Ապահովում է բոլոր ԵՄ օրենքների ճշգրիտ և միասնական մեկնաբանումն ու կիրառումը; • Կարող է գործել որպես անկախ որոշում ընդունող մարմին՝ ԵՄ պայմանագրերի շրջանակներում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 	
<p><i>Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի խորհրդանիշը</i></p>	<p style="text-align: center;">Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտե</p> <p>Խորհրդակցական մարմին է, որը ներկայացնում է քաղաքացիական հասարակության ձայնը (արհմիություններ, գյուղատնտեսներ, սպառողներ և այլն);</p> <p>Ունի 344 անդամ:</p> <p>Գործառույթներ</p> <ul style="list-style-type: none"> • Խորհրդատվություն է տրամադրում եվրոպական կառույցներին սոցիալական և տնտեսական քաղաքականությունների վերաբերյալ որոշումներ ընդունելիս; • Խրախուսում է քաղաքացիական հասարակության ներգրավումը ԵՄ քաղաքականությունների մշակմանը; • Աջակցում է ոչ ԵՄ երկրների քաղաքացիական հասարակություններին և օգնում ստեղծել խորհրդակցական կառույցներ:

 <p>ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ</p>	
<p><i>Շրջանների կոմիտեի խորհրդանիշը</i></p>	<p style="text-align: center;">ԵՄ շրջանների կոմիտե</p> <p>Խորհրդակցական մարմին է, որը ներկայացնում է շրջանային և տեղական իշխանությունների ձայնը (տեղական մարմինների ղեկավարներ կամ այլ ներկայացուցիչներ);</p> <p>Ունի 344 անդամ:</p> <p>Գործառույթները</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել տեղական իշխանությունների շահերը եվրոպական կառույցներում խորհրդատվություն տրամադրելով Հանձնաժողովին և Խորհրդին այն հարցերի վերաբերյալ, որոնք ուղղակիորեն կապված են տեղական և շրջանային իշխանությունների հետ:


 <p>ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ</p>	
<p><i>Եվրոն ներկայացվեց 1999թ-ին</i></p>	<p style="text-align: center;">Եվրոպական կենտրոնական բանկ</p> <ul style="list-style-type: none"> • Եվրոպական կենտրոնական բանկի (ԵԿԲ) հիմնական գործառույթն է պահպանել եվրոյի արժեքը և գների կայունությունը եվրոգոտում; • Եվրոյի գոտին ներառում է ԵՄ 16 երկրներ և գործում է 1999թ-ից; • ԵԿԲ-ն գործում է անդամ պետությունների կառավարություններից անկախ; • Սահմանում է գնաճի (ինֆլյացիա) նշաձող՝ ներկայումս տարեկան առավելագույնը 2%; • Սահմանում են կարճաժամկետ տոկոսադրույթներ ամբողջ եվրոգոտու համար; • Իրականացնում և դիտարկում է դրամավարկային քաղաքականությունը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 

Լիսաբոնյան համաձայնագիր

Ստորագրվել է անդամ պետությունների կողմից 2007թ-ին և ուժի մեջ մտել 2009թ. դեկտեմբերի 1-ին:

- **Առավել ժողովրդավարական և թափանցիկ Եվրոպա**
 - Եվրոպական և ազգային խորհրդարանների դերի մեծացում
 - Յուրաքանչյուր ունի հնարավորություն կամովին դուրս գալու միությունից
- **Առավել Արդյունավետ Եվրոպա**
 - Արդյունավետ որոշումների ընդունման մեխանիզմ. 2014թ-ից ԵՄ խորհրդում որոշումները կընդունվեն անդամ պետությունների 55%-ի կողմից, որոնք կերկայացնեն են ԵՄ բնակչության առնվազն 65%-ը:
 - Նոր պաշտոն՝ Եվրոպական խորհրդի նախագահ 2.5 տարով՝ 6-ամսյա նախագահությունների փոխարեն
- **Իրավունքների և արժեքների, ազատության, համերաշխության և անվտանգության Եվրոպա**
- **Եվրոպան որպես գլոբալ խաղորդ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 

Լիսաբոնյան համաձայնագիր

Ստորագրվել է անդամ պետությունների կողմից 2007թ-ին և ուժի մեջ մտել 2009թ. դեկտեմբերի 1-ին:

- **Առավել ժողովրդավարական և թափանցիկ Եվրոպա**
 - Եվրոպական և ազգային խորհրդարանների դերի մեծացում
 - Յուրաքանչյուր ունի հնարավորություն կամովին դուրս գալու միությունից
- **Առավել Արդյունավետ Եվրոպա**
 - Արդյունավետ որոշումների ընդունման մեխանիզմ. 2014թ-ից ԵՄ խորհրդում որոշումները կընդունվեն անդամ պետությունների 55%-ի կողմից, որոնք կերկայացնեն են ԵՄ բնակչության առնվազն 65%-ը:
 - Նոր պաշտոն՝ Եվրոպական խորհրդի նախագահ 2.5 տարով՝ 6-ամսյա նախագահությունների փոխարեն
- **Իրավունքների և արժեքների, ազատության, համերաշխության և անվտանգության Եվրոպա**
- **Եվրոպան որպես գլոբալ խաղորդ**